


ԺՈՂՈՎՐԴԱԿՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

(Հովհաննես Հովհաննիսյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Գ. Խ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հայ պոեզիայի կլասիկ Հովհաննես Հովհաննիսյանը մեծ ավանդ է ներդրել հայրենի բանաստեղծական կուլտուրայի զարգացման մեջ: Հովհաննիսյանը խոշոր հաջողությունների հասավ ռեալիստական-հոգեբանական մեթոդի զարգացման գործում, բազմակողմանիորեն խտացնելով ժողովրդական զգաց-



մունքների և մտքերի աշխարհը: Հովհաննիսյանն իր քնարերգության մեջ ռեալիստորեն արտացոլեց ժողովրդի իղձերը: Հումանիստական սկզբունքներով տուրբաված նրա քնարական պոեզիան վճռական նշանակություն ունեցավ հայ բանաստեղծության հետագա զարգացման համար:

Հովհաննիսյանի ստեղծագործությունն աչքի է ընկնում ռեալիստական նոր ուղիների որոնմամբ, բարձր վարպետությամբ և դեմոկրատական նպատակա-

սլացությամբ, պայմանավորված՝ ժողովրդի հետ սերտ կապով: Այլ. Շիրվան-
զադեն Հովհաննիսյան-բանաստեղծին բնութագրում է իրրև հետևողական ունա-
լիստի, ազնիվ զաղափարական ձգտումներով համակված մի բանաստեղծի,
որի գործերը կրում են առողջ բնույթ և ազատ են այն մրուրից, որը բերում
էին եվրոպական մոգեոնիզմի հիվանդոտ արտահայտությունները զարտուղի-
ճանապարհներով: Այդ ամենը բանաստեղծին արժանի տեղ ապահովեց հաջ-
պոնգիայի զարգացման պատմության մեջ: Համառոտակի վերլուծելով Հով-
հաննիսյանի ստեղծագործությունը, Վալերի Բրյուսովը նրա մասին իր մտքերը
ամփոփել է հետևյալ բնութագրական խոսքերով. «Հիանալի կրթության տեր-
մարդ, որն իր ճաշակը դաստիարակել է համաշխարհային գրականության դա-
սական նմուշների վրա, Հովհաննիսյանը բոլոր տեսակետներից հայ նոր պոե-
զիայի նորագույն փուլի ստեղծողն է. նրա շատ գործիչներ հանդիսանում են
կամ Հովհաննիսյանի ուղղակի աշակերտները, կամ նրա հետ կապված են բա-
րեկամության կապերով և չեն խուսափել նրա բարերար ազդեցությունից»¹:

Այդ զեղարվեստական նորարարության համար հատկանշական է Ս. Շա-
հադիզի հայտնի ոտանավորը, որով նա ազդարարում էր բանաստեղծական
նոր սերնդի երևան գալը և նշում գրական ավանդների հաջորդականությունը:

Մեռավ իմ մուգան, հաճախ և կրակ,
Անտառ լցվեց ուր տերեւներով.
Երկինքը ծածկվեց, փախավ արեգակ,—
Էլ ես չեմ ապրում ուրախ երգերով:
Եվ աստղազառք լողուակ գմբեր,
Եվ արծաթափայլ ջրերի խոխոշյուն
Այլևս չեն խոսում բանաստեղծի ճևտ,
Եվ ոչ այցելում ավերված իմ տուն:
Ա՛յ իմ իսձ մեաց միայն փշրանքներ,
Մալու մտավ ահա և ճշույլ վերջին,—
Հանում եմ գրահս, և՛ զեւ, և՛ զսրգեր,
Հանձնում եմ զուրանց մանուկ սերնդին:

Հովհաննիսյանը հաղթահարեց ումանտիկական մտածողությունը և մե-
զանում հանդիսացավ ունալիստական դպրոցի սկզբնավորող-հիմնադիրը: Նա
վճռականորեն ժողովրդային ուղղություն տվեց հայ պոեզիայի զարգացմանը:
1887 թ. Մոսկվայում հրատարակված նրա բանաստեղծությունների անդրա-
նիկ ժողովածուն պատմական նշանակալի դեր խաղաց հայ նոր պոեզիայի
զարգացման պատմության մեջ, խոր տպավորություն գործելով ժամանակա-
կիցների վրա: Այնուհետև Հովհաննիսյանի ստեղծագործության
բնորոշ գծերը ավելի խորացան, բազմակողմանիորեն մարմնավորելով ժողո-
վրդի իրական կյանքը: Ստեղծվեցին ունալիստական հիանալի պատկերներ,
որոնք նոր մեթոդի հիմքը հանդիսացան: Բանաստեղծը ժողովրդական պոե-
զիան ազդաւին արվեստի անկյունարարը դարձրեց: Դեմոկրատ-արվեստա-
գետի նոր ավանդները պատմականորեն հող պատրաստեցին Հովհ. Թուման-
յանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի նորարարական զեղարվեստական խոշոր
նվաճումների և առհասարակ հայ պոեզիայի հետագա դեմոկրատացման հա-
մար:

¹ „Поэзия Армении“, Москва, 1916, էջ 77:

Հովհաննիսյանն իր ստեղծագործության մեջ դիմում է պոեզիայի գրեթե բոլոր ժանրերին և ամենուր դրսևորում է շմարիտ վարպետություն, ցույց տալիս հայոց լեզվի գեղեցկությունը և ոճային հարստությունը։ Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում բանաստեղծի ոտանավորները իրենց երաժշտականության ու պատկերայնության տեսակետից։

Հովհաննիսյանի պոետական ստեղծագործությունը, ինչպես նաև նրա գրական-քննադատական հոդվածները առաջադիմական դեր են խաղացել և նպաստել են ռեալիստական նոր պոեզիայի ձևավորմանը։ Ըր դեմոկրատական համոզմունքները, գեղագիտական հայացքները Հովհաննիսյանը շարադրել է մի շարք արժեքավոր հոդվածներում, նամակներում, արտահայտել դասախոսությունների ընթացքում, ինչպես նաև արվեստի պրոբլեմներին նվիրված բանաստեղծություններում։ Քննության առնելով կլասիցիզմի, ռոմանտիզմի գրական ուղղությունները, բանաստեղծը դրանց զարգացումը կապում է պատմության ընթացքի հետ, հանգելով այն եզրակացության, որ դա օրինաչափ երևվույթ է։ Նա պաշտպանում ու զարգացնում է այն միտքը, որ ինչպես մարդկային հասարակության զարգացման պատմությունն ունի իր օրենքները, այնպես էլ գրականության ու արվեստի զարգացումը ունի իր օրինաչափությունը։ Որը չի կարելի հաշվի չառնել։ Գեղարվեստական գրականության զարգացման դարաշրջաններից յուրաքանչյուրը նա պատմականորեն հիմնավորում է հասարակական կյանքի համապատասխան զարգացմամբ և ռեալ իրադրությամբ, հնի դեմ նորի պայքարով։ Այդ կապակցությամբ բանաստեղծը խոսում է առաջադիմական ու պահպանողական ավանդների մասին, գրական տարբեր ուղղությունների, տարբեր դպրոցների միջև պայքարի ու բախումների մասին։ Հովհաննիսյանն ասում է, որ նորը հնին կենաց ու մահու պատերազմ է հայտարարում։

Հովհաննիսյանի գրական հայացքների պարզաբանման համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում Յուրի Վեսելովսկուն գրած նրա նամակը, որտեղ ընդգծվում է ռուսական դեմոկրատական մշակույթի նշանակությունը։ Բանաստեղծը խոսում է Պուշկինի և Լեմոնտովի նկատմամբ իր հատուկ սիրո մասին։ Պոետը նշում է նրանց ստեղծագործությունների համաշխարհային նշանակությունը, ինչպես նաև ռուսական դեմոկրատական մշակույթի դերը հայ գրականության զարգացման վրա վերջին հարյուրամյակում։ Բանաստեղծը առանձնապես զատորոշում է Ա. Պ. Չեխովին, բարձր գնահատելով նրա ռեալիզմը։ Բաքվում Վալերի Բրյուսովի դասախոսությունից հետո նրան սրբափայլ ողջունում է Հ. Հովհաննիսյանը. «Թույլ տվեք ինձ Բաքվի հայ գրողների ընկերության կողմից ողջունել ձեզ, որ պանծալի ներկայացուցիչներից մեկն եք բոլորիս սիրելի ռուս գրականության, որով սնվել ու սնվում է հայկական երիտասարդ բանաստեղծությունը, որով կրթվում է Ռուսաստանի ուսումնաժարավ հայ բնակչությունը։ Մքանչանում ենք Բրյուսով-բանաստեղծով և միանգամայն խոնարհվում ենք մարդ-Բրյուսովի առաջ, որ մեր այս ժանր նեղ-սադրության պահուն այնքան համակրություն ցույց տվեց մեր տառապյալ ազգին։ Մեծ է Ձեր մեզ արած ծառայությունը և մանավանդ գնահատելի է այժմ, երբ մենք կարոտ ենք մաքուր աղբյուրի բխած ուղղամիտ դատաստանի։ Իսկ ո՞ր աղբյուրը կարող է ավելի մաքուր համարվել, քան ազգային ստեղծագործությունը, որի մեջ արտահայտվում է ամեն մի ազգի ամբողջ բարոյական կերպարանքը, ամբողջ հոգևոր կյանքը։ Չկա այնպիսի բացատրություն, որ

րավական համարեինք մենք այն ձեռնարկության համար, որի զուխն եք ան-
ցել դուք. ձեռնարկության, որի նպատակը ուսու հասարակությանը համեստ
հայ մուսայի բազմադարյան ստեղծագործության ծանոթացնելն է»:

Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի
թանգարանում, Հովհաննիսյանի արխիվում կան մի քանի տետրակներ: Դրանք
1890-ական թթ. կարդացված դասախոսությունների գրառումներն են: Դժբախ-
տաբար, ոչ բոլոր տետրակներն են պահպանվել, բայց նրանցում, որ հասել
են մեզ, մենք գտնում ենք շեքսպիրյան դրամատուրգիային Հովհաննիսյանի
տված լրիվ ու խոր բնութագիրը: Բանաստեղծը հանգամանորեն շեշտել է այն
նորը, որ անգլիական մեծահանճար դրամատուրգը ներդրել է համաշխարհա-
յին մշակույթի զանձարանը: Ուշագործության արժանի են իտալական Վերածը-
նընդի, ֆրանսիական գրականության պատմության վերաբերյալ կոնսպեկտ-
ները: Այստեղ մենք կրկին գտնում ենք Հովհաննիսյանի խոր էրուդիցիայի
վկայությունը: Նա անտիկ, արևմտա-ևլրոպական և ուսու գրականությունների
մեծ գիտակ էր և բնդհանրապես գիտեր համաշխարհային գրականության
պատմությունը, թե՛ դասական և թե՛ եվրոպական լեզուներ:

Ժողովրդական բանաստեղծի ղեմնկրատական մտածողության համար
հատկապես բնութագրական է հետևյալ քառյակը, որն ունի գրական ամբող-
ջական կոնցեպցիայի նշանակություն:

Միայն այն կապրի, որ միշտ է անմահ—
Սուրբ գեղեցկություն և սուրբ գաղափար,
Վեհ միտքը ազատ կնեղանի կրմես
Ու սերն անձնագոհ՝ խեղճ եզրուր համար...

«Այստեղ տրված է մի ամբողջ ծրագիր, որ բնորոշում է Հովհաննիսյանի
բանաստեղծական դեմքը իր ողջ էությունը»²,— գրել է Ալ. Մյասնիկյանը:

«Աղբյուր»-ում տպված իր գրախոսության մեջ Ղ. Աղայանը Հովհաննիս-
յանի առաջին ժողովածուի կապակցությամբ վեր է հանում և զնահատում դրա-
կանության ժողովրդայնության տենդենցները: «Բանաստեղծի ցավը, վիշտը
ժողովրդին է, ինչպես ժողովրդինը՝ նրանը: Նա ունի նույն հավատը, որ ունի
ժողովուրդը անցյալի վերաբերությամբ, նույն սերը, որ ունի ներկայում, և
նույն հույսը, որ ունի ապագայի վերաբերությամբ: Բանաստեղծը ժողովրդի
լեզուն է, նրա սրտի հայտարարն ու թարգմանը: Վերջապես, բանաստեղծը
ժողովրդի ծնունդն է և ոչ ժողովուրդը բանաստեղծի»³: Այնուհետև Աղայանը
նշում է, թե «բանաստեղծության վրա այդ տեսակետից նայած», Հովհաննիս-
յանի ոտանավորները ճշմարիտ բանաստեղծության դրոշմն են կրում իրենց
վրա: Հենց այդ պատճառով էլ Աղայանը ողջունում է ժողովրդային սկզբունք-
ների ուժեղացումը հայ պոեզիայում և նրա մերձեցումը ժողովրդական խա-
վերի հետ:

Ասի՛ աշո՛ղ, առ շունգուրդ, մեզ բան ասա՛ սրտայի.
Կարոտ եմք քու անուշ ձենիե, մի բան ասա՛ սրտայի.
Սրտի խոսք եմք ուզում քեզից, ու վեր հանի մեր հոգիե—
Ա՛ռ շունգուրդ, դարդո՛տ աշուղ, մեզ բան ասա՛ սրտայի:

2 «Դարուն», ամսանախ, գիրք երրորդ, Մոսկվա, 1912, էջ 216:
3 «Աղբյուր», 1887, № 10:

Լուռ մրնայով մեր վերերին դու չես անի դեղ դարման,
Արար-աշխարհի գիտի՝ չրկա մեր դարդերին չափ, սահման,
Մեջուրյունն էլ նըշան հո չի՝ մի գովելի հատկությամբ—
Ա՛ն չունգուրդ, մեղ բան ասա՛, բող խոսքդ րլնի ցավալի:

Էդպես խոսքեր շատ ենք լսել, էլ կրսենք անտրտունը,
Մեր շխտական րլնությունն է՝ մրնացել ենք անտերունը.
Լավ է ազատ լաց րլնիր, բանց դարդ տանիլն անմոռնը,
Ասա՛ լսենք, ի՞նչ անենք որ խոսքդ կրլնի ողբալի:

Բանաստեղծը «երկրպագու է կանգնում ճշմարտության պատկերի» և ներդաշնակ կերպով հնչեցնում իր սրտի վառ զեղումները ունայնական-հոգեբանական բազմազան եղանակներով, ժողովրդական կոլորիտով: Դնայով ավելի են ուժեղանում ժողովրդային տենդենցները, ունայնական մերկացումները: Բանաստեղծը ճշմարտացիորեն, զեղարվեստական ինքնատիպ ձևավերով տալիս է բուրժուական «քարսիրտ աշխարհի» կոնկրետ պատկերը: Պոետը դրսևորում է իրականության, սոցիալական անարդարությունների անմիջական զգացողությունն և խոր ունայնական մարմնավորում ժողովրդին հուզող հարցերը, դեմոկրատական տրամադրությունները, այդ ամենը արտահայտելով հստակ պատկերավորությամբ: Քնարերգուի ունայնական մտածողությունը և հուզական հարստությունը վեր է ամեն տեսակի շինծու և անբնական ծամածուծություններից, սենտիմենտալությունից: Դեմոկրատական-հումանիստական առաջավոր մտածողությունը ամբողջացված ձևով է դրսևորվել «Ես բեզ սիրեցի» նշանավոր բանաստեղծության մեջ, ուր խտացվում են ժողովրդական տառապանքի պատկերները, բացահայտվում «ճակատագրի խորթ որդոց» ողբերգական դրությունը: Հովհաննիսյանը ծամանակի իրականության սոցիալական հիմնական գծերը բնութագրում է «հազարալեզու թշվառություն» փոխաբերությամբ, շեշտում է, որ դոցա համար է ինքը սեր պահում, ճակատագրի խորթ որդոց համար, որոնց «առաջին դուռը չէ բանում մխիթարության քարսիրտ աշխարհը»:

Տո՛ւր ինձ, սիրելիս, և եռ սերն անրիծ
Այս հառաչանքի հովիտը տանեմ—
Դուց երեքուեք ցաված աչերից.
Մաշված նակատից քախիծը խլեմ:

Ժողովրդի ծանր կացությունը դրսևորվում է զեղարվեստական բազմազան ձևերով, տիպական հատկանիշներով: Այս էական թեմայի զեղարվեստական մշակումը բնթանում է ունայնական զեղագիտական սիլլոբների հետևողա խորացման ճանապարհով: «Ես բեզ սիրեցի» բանաստեղծությունը համակված է դրամատիկական շնչով, սոցիալական իրական կենսազգացողությամբ, մտածունքների հարստությամբ, առնական առոգանությամբ և խոր հուզումնալիությունով: Այդ տեսակետից բնութագրական է նաև «Լինում է րուպե, ես անիծում եմ...» չափատողով սկսվող բանաստեղծությունը, ուր հեղինակը չի կամենում գլուխ խոնարհել «արյունով կանգնած մեծափայլ կուռքին»: Կենսալի հոգեբանական պատկերները ոչ միայն կոնկրետացնում են ժողովրդի ողբերգական վիճակը, այլև ուժեղացնում բուրժուական աշխարհի քննադատությունը: Հովհաննիսյանն այդ հիմնական դժերը խտացնում է արտասովոր բանաստեղծական ներշնչվածությամբ և հոգեբանական համոզչությամբ:

Իմ հոգու ձայնին ևս հավատում եմ,
եվ աղփատության ու Լեզի համար
ես իմ դրոշակն ահա պարզում եմ—
եվ այսուհետև հավատս սպայծառ:

Ժողովրդի բանաստեղծը ամենուրեք տեսնում է ստրկության մոռյլ գիշեր, ճնշող կապանքներ, ավեր ու բռնություն, խայտառակ լուծ և մոլեռանդ խավար: Նրա մի շարք գեղարվեստական պատկերները՝ տոգորված են զայրությամբ ու վրդովմունքով, որոնք առավել հասարակական հնչեղություն ունեն: Բուրժուական գործելակերպը բնութագրվում է «շահ ու բռնություն», «շղթա և ավեր» դիպուկ խոսքերով: Բանաստեղծը շեշտում է, որ այս աշխարհում մարդիկ հույս կեն ձեռք բերում ոսկով, իրենց մեծափայլ փառքը արյունով են կանգնեցնում: Անողոր ռեալիզմով Հովհաննիսյանը պակագերծ է անում բուրժուական կարգի եղևոնագործներին, պատռելով նրանց ոսկեզօծ դիմակը: Ցույց տալով ժամանակի հասարակական կյանքի ախտերը, բանաստեղծը ամբողջացնում է իր բնդհանուր կենսափորձը, բուրժուաներին անվանելով «զայլ» գիշատող»:

Վ. Բելինսկին նկատում է, թե «յուրաքանչյուր մեծ բանաստեղծ մեծ է այն բանով, որ նրա տառապանքի ու երանության արձատները խոր տարածվել են հասարակության պատմության խորքերը, որ նա հետևապես հասարակության, ժամանակի մարդկության օրգանն է և ներկայացուցիչը: Միայն փոքր բանաստեղծները բախտավոր և անբախտ են իրենցով և իրենցից: Բայց չէ՞ որ միայն իրենք են լսում իրենց թռչնային երգերը, որոնք չեն ճանաչել ոչ հասարակությունը, ոչ մարդկությունը»⁴:

Հովհաննես Հովհաննիսյանի հումանիստական լայն և բազմակողմանի հայացքը աշխատավոր մարդու հոգեբանության նկատմամբ, հայրենիքի, սիրո. բնության երևույթների մարմնավորման ընթացքում ժողովրդայնության խոր տարերքի հիմքն է կազմում, դեմոկրատ-բանաստեղծի տառապագին խոհերն ու զգացմունքները համաժողովրդական նշանակալից տրամադրություններ են արտահայտում, նշելով արժատական շրջադարձ հայ նոր պոեզիայի պատմության մեջ:

Ժողովրդային պոեզիայի մի անզուգական զուխ-գործոց է «Արագն եկավ...» բանաստեղծությունը, որն իր կենսալի բովանդակությամբ և կատարյալ ձևով հանդիսանում է բազմադարյան հայ պոեզիայի նշանավոր երեվույթներից մեկը: Հեղինակն այստեղ ընդգրկում է ժողովրդի կյանքի սոցիալ-պատմական ու հոգեբանական ամբողջությունը: «Արագը...» ցույց է տալիս, թե ինչպես է Հովհաննիսյանը, ժողովրդի կեցության ու հոգեբանության մեջ ներթափանցելով՝ հայտնագործել պոեզիայի իսկական ժողովրդայնության ոսկե բանալին: Արաքսի այլարանական պատկերի մեջ արտացոլվում է հայ ժողովրդի մեծ ողբերգությունը և ազնիվ ցասումը: Ընթերցողը գեղագիտական բարձր բավականություն է ստանում վսեմ պարզությունից, անկրկնելի բնականությունից և դրամատիկ շնչից:

Արագն եկավ լալին տալով.
Ժեռ էաբերին, ավին տալով.
Ուտե՛ղ բաղեմ ևս իմ դարդը.
Չուր գլուխս տալին տալով:

4 Վ. Բելինսկի, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 672:

Բանաստեղծության շարունակության մեջ քնարական հերոսը՝ ժողովրդի մարդը, երևան է գալիս բարձր հոգեկան գծերով, որոնք խորապես հարազատ են ժողովրդական հոգեբանությանը։ Դրա համար էլ այս պատկերները բնականաբար անցել են ժողովրդի մեջ, այնքան մուտչելի ու հարազատ են դարձել նրա սրտին ու հոգուն, որ 1916 թ. այդ կապակցությամբ հայկական մամուլում չեն առաջացավ՝ ժողովրդական է «Արաղը», թե՛ ինքնուրույն՝ գրական։

Բանաստեղծը խորանում է ժողովրդի ողբերգական վիճակի, ինչպես նաև առանձին անհատի և բուրժուական հասարակության միջև եղած հակասության քաջահայտման մեջ։ Դժվար չէ ընդամին նկատել, որ Հովհաննիսյանի պոեզիայում հիմնականն այն է, որ բացահայտվում է դեմոկրատ-հերոսի ներքին աշխարհը, նրա ապրումները, հիասթափությունը, ըմբոստ անբավականությունը բուրժուական իրականությունից։ Ելույթի թեմաներով գրված երկերը, հատկապես «Ելույթի ժամը» մերկացնող ռեալիստական բանաստեղծությունը և այլ գործեր, աչքի են ընկնում իրենց խոր ժողովրդական և առաջադիմական բովանդակությամբ։

Ա՛խ, նազլո՛ւ ջան, չես իմանում—

էզուց էլի աղան կը գա,

նորա սիրտը միշտ անկշտում,

էլ ամպի պես պիտի գոռա.

«Շուտով, Գրիգոր, փողերը բե՛ր...—

էլի չրկա՛, կովրդ հանի՛ր»...

Ա՛խ, նազլո՛ւ ջան, այն ի՛նչ բան էր,

Լի՛տդ է հերու... Տե՛ր, դու փրկի՛ր։

Ժողովրդի տառապանքները բանաստեղծը ցույց է տալիս իրական հանդամանքներում, ստեղծելով ճշմարիտ հոգեբանական պատկերներ։ Դա ալբոմային լիրիկա չէ, այլ դեմոկրատական ռեալիզմ, որի հիմնական գծերն են՝ ժողովրդայնությունը և հայրենասիրությունը։ Հովհաննիսյանի երկերը միշտ տողորված են ժողովրդի բողոքով և անարդարացի կարգերի դեմ նրա բուռն զայրույթով։ Բանաստեղծի կարծիքով, բուրժուական կարգերը խորապես հակամարդկային են, և նա դրանով է պայմանավորում ժողովրդի տխուր բախտավիճակը, դրանից էլ թախծոտ մոտիվները՝ նրա քնարերգության մեջ։ Հովհաննիսյանի հումանիստական բարձր զգացմունքներով տողորված պոեզիան սոցիալական հարցերը շոշափում է ելնելով ժողովրդի և հայրենիքի իրական դրությունից։

Բանաստեղծը, առանձնապես 1890-ական թթ., ապրում է իր իղբալիների խորտակումը հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման վերաբերմամբ։ Հովհաննիսյանի քնարերգության մեջ հիմնականը, կապված ժամանակի իրականության հետ, հայրենասեր դեմոկրատի բողոքն է հայ ժողովրդի վերաբերմամբ թուրք ճնշողների հանցագործությունների դեմ։ Այդ շրջանի նրա ոտանավորները լի են խոր վրդովմունքով և դրամատիզմով։ Միաժամանակ այդ բանաստեղծությունները համակված են ժողովրդի նկատմամբ սիրով։ «Նոր գարուն» հայտնի ողբերգական պատկերում բացառիկ ուժով ներկայացված են թուրք բարբարոսների կազմակերպած կոտորածները և այն ամենը, ինչ հետևեց դրանց։ Ինչո՞ւ համար է պարնան գալը.

Քեզ րսպասող շրմրեաց,
Ո՛ր ևս զսլի, ա՛յ զսուրեւ,
Գովեզ ասող շրմրեաց,
Զուր ևս զսլի, ա՛յ զսուրեւ:

Ան-մութ պատեց աշխարհին.
Ասա ու ծուր գառան արին.
Անգ վայ բերեց ևս տաբին—
Ո՛ր ևս զսլի, ա՛յ զսուրեւ:

«Նոր դարուն»-ի բովանդակության մեջ ցույց է տրված ժողովրդի և նրա բանաստեղծի ճակատագրերի ընդհանրությունը: Բանաստեղծը բննադատում է դաժան կարգերը, ժողովրդի ծանր վիճակը նրա մեջ առաջ է բերում տխուր մտածումներ, ողբերգական տրամադրություններ: Բանաստեղծն ապրում է հոգեկան ճգնաժամ, անկանկրի տրագիկոմի ու ցավով լի հիասթափություն: Նա ճշմարտացիորեն է պատկերում ժողովրդի վիճակը: Երևան ևս զսլիս իսկական վարպետությամբ ու ունակության գիտողականությամբ կերտված գործեր, որոնք ցույց են տալիս նրա հույսերի ու ձգտումների խորտակումը: Սակայն բանաստեղծը հաղթահարում է իր հուսահատությունը: Ազատությունը չի զսլիս առանց պայքարի: «Սարն ի վեր» ուտանավորի մեջ հեղինակը լրիվ արդարացնում է այդ ելակետը: «Ես չգիտեմ,—գրում է Մ. Արեղյանը,—մեր բանաստեղծության մեջ կա՞ն արիություն, հուսո և հավատի այնպիսի ուժեղ արտահայտություններ, որոնց մեջ բանաստեղծը այնպես խորին համոզմունքով վստահ լիներ իր առաջնորդ աստղին. ոչ կյանքի անհավասար կռվի մեջ ջարդված ու փշրված, անվստահ դեպի առաջ քաջալերության ձայն տալու Հովհաննիսյանի «Սարն ի վեր», «Հավատում եմ, մեռնելու չէ», «Երբ կյանքի ունայն հոգսերից», «Մենք միասին գնում էինք» և ուրիշ շատ բանաստեղծություններ մեր հայրենի երգերի գոհարներն են, որ երբեք հնչեցրել է հայ քնարը»⁵: Դեմոկրատ բանաստեղծը, վերջին հաշվով, չէր կարող հաշտվել անկանխելիության փրկսոփայության հետ: Նա իր հոգում գտնում է նոր ուժեր, և նրա մեջ հույսեր են զարթնում ավելի լավ ապագայի նկատմամբ: Ապագայի հանդեպ հենց այդ հավատը թույլ է տալիս Հովհաննիսյանին հաղթահարել սեփական հիասթափությունները և հուսախարությունները: Նա ավելի լավատեսություն է նայում հեռուն: Նրա համար խիստ կարևոր է դառնում արտահայտել բերկրանքի զգացմունքներ՝ լուսարացի սպասումով: Նրա որոշ բանաստեղծություններում տխրության լիրիկան տեղը զիջում է լավատեսական խոհերին: Բանաստեղծը հավատացած է՝ գոյություն ունեցող հասարակական շարիքը վերջիվերջո «պիտի չմնա անվերջ, անվախճան»:

Զգիտեմ ինչո՞ւ, երբ տեսնում եմ ևս
Ինչպես սաստկանում, աճում է շարիք,
Եվ աճագորույն դաժան սփիւնքսի պես
Խլում է մատաղ մեռ կյանքի ծաղիկ,—
Ես մտածում եմ, որ այս շարիքն էլ
Պիտի չմնա անվերջ, անվախճան:

Այս պատկերները առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում՝ իրենց սոցիալ-պատմական ճշմարտացիությամբ, դեմոկրատական արիության, լավատեսական տրամադրությամբ և խոր հուզականությամբ:

⁵ «Արարատ», 1912, № 4:

Պատմական թեմատիկայի բնագավառում բանաստեղծը չի տարվում հնացած հայացքներով: Այդ ուղղությամբ էլ նրա դեմոկրատական դիրքավորումը տալիս է իր արդյունքները: Բանաստեղծը հաճախ է դիմել պատմական անցյալին, մի բան, որ բնդլայնել է նրա պոեզիայի շրջանակները: Հայ ժողովրդի պատմական անցյալի պատկերում բանաստեղծի մոտ ծառայել է ժամանակի իրականության հասարակական պրոբլեմների լուծմանը: Բանաստեղծը ձգտում է թափանցել պատմական իրադարձությունների խորքը, հասկանալ անցյալի հասարակական պրոցեսները, ցույց տալ օտարերկրյա նվաճողներ/դեմ ժողովրդի ազատագրական պայքարի արդարացիությունը: Հովհաննիսյանը ձգտում է պատկերել պատմական իրադարձությունների բազմազանությունը, անցյալի մարդկանց հոգեբանությունը, նրանց հայացքները:

Պատմական թեմատիկայով զբաղված գործերը և հատկապես «Սյունյաց իշխանը» բալլադը խտացված կերպով արտահայտում են Հովհաննիսյանի պատմագիտական կոնցեպցիան, բացահայտում նրա վերաբերմունքը հայ ժողովրդի պատմական անցյալի նկատմամբ: Հովհաննիսյանի խտորիզմը կրում է ակտիվ դեմոկրատական բնույթ և շատ կոզմերով առնչվում է արդիականության հետ: Այդ կապակցությամբ մեծ նշանակություն են ձևոր բերում արդիական հարցերը, որոնք նրա մոտ հանդիս են գալիս բանաստեղծական ամենատարբեր իմաստավորմամբ: Դրան բանաստեղծը հասնում է պատմական անցյալի և ժողովրդի ունեցող իրականության միջև գուգահեռներ և հակադրություններ անցկացնելու միջոցով, րստ որում, բոլոր դեպքերում ժամանակակից իրականության հարցերը նրա կողմից քննարկվում են հայրենասիրական-դեմոկրատական դիրքերից: Պատկերելով և՛ պատմական անցյալը, և՛ ժամանակի իրականությունը, Հովհաննիսյանը ձգտում է բացահայտել ճշմարտությունը: Դրանով են պայմանավորված շատ երկերի ինտոնացիաները, ոճական առանձնահատկությունները: Բանաստեղծը չի տարվում անցյալի ալլաբանություններով, կեղծ-միստիկական վերաբերմունքով դեպի հին աստվածները: Սուր կոնֆլիկտները պատմական ժանրի երկերում, լարված դրամատիզմը, ժողովրդա-ազատագրական ոգին,—ահա բանաստեղծի ատեղծագործության գրծերը տվյալ թեմատիկայում: «Արտավազդ» լեգենդի հոյակապ պատկերներում ցույց է տրված ժողովրդի դերը՝ որպես ամենակարող դատավորի: «Տրդմուտ» և Վարդանանց նվիրված այլ բանաստեղծություններում պոետն ուժեղացնում է հայրենասիրական թեման և պատմական գուգահեռներ անցկացնելով սուր քննադատության ենթարկում բուրժուական հասարակությունը:

Պոետը պատմությանը նայում է ժողովրդի աչքերով: Նրա գրական-պատմական երկերի ուժը ժողովրդայնությունն է, հետևողական դեմոկրատիզմը: Եա պայմանավորված է նաև ժողովրդական բանավոր ստեղծագործության արտահայտիչ միջոցների օգտագործմամբ, որն առանձնապես զգացվում է «Վահագնի ծնունդը» լեգենդում:

Հ. Հովհաննիսյանը բանաստեղծական խորունկ զգացմունքի մարդ է, օժտված գեղեցիկ զգացումով և էսթետիկական նուրբ ճաշակով: Իր լիրիկայում նա երգում է մարդու ազնիվ ձգտումները, նրա հոգեկան լավագույն հատկություններն ու արժանիքները, բարձրացնում է նրա բարոյական ուժը և բնդհանրապես այն ամենը, ինչ գեղեցիկ է նրա մեջ: Միաժամանակ ուսիստ բանաստեղծը քննադատում է բուրժուական հասարակության ալլանդակ, անմարդկային բարքերը, այն ամենը, ինչ խորթ է ժողովրդի առողջ ոգուն և նրա

առաջադիմական հումանիստական իդեալներին: Այդ ամենի մասին խոսում են պոետի հումանիզմով թաթավուն սիրային լիրիկան, մարդու արժանապատվության նկատմամբ ոչ արհեստական, մտքուր հայացքը, ի հակադրություն հակամարդկային այն դրույթի, թե մարդկային բնավորությունը իր էությունը աստոր է: Բանաստեղծի կարծիքով մարդն իրավունք ունի բախտավոր լինելու, սակայն ծանր է այն հանգամանքը, որ բուրժուական հասարակական հարաբերությունները և նրանցից ծնունդ առած արատավոր բարքերը կործանում են ոչ միայն մարդկանց իդեալները, այլև նրանց ճակատագիրը:

Հովհաննիսյանի սիրային լիրիկան, որը տողորված է հումանիստական իդեալներով, բացահայտում է մարդու հոգևոր աշխարհը, կյանքի հակասությունները, ուրախություններն ու վշտերը: Սիրային քնարերգությունը ցույց է տալիս ոչ միայն անանձին անհատի կյանքն ու զգացմունքները, այլև լայնորեն բացահայտում ժողովրդի կյանքի նորանոր բնորոշ գծերը: Սրանում դարձյալ ի հայտ է գալիս Հովհաննիսյանի քնարերգության գլխավոր գիծը՝ նրա օղորդվորդայնությունը: Դեմոկրատ բանաստեղծի սիրային մոտիվներում դրսևորվում է հիասթափությունը բուրժուական բարքերից, որը նրա քնարերգության մեջ մերթ թափանցում է հումորի պրիզմայի միջով, մերթ արտահայտվում երջանկության մասին երազանքներում, խորտակված հույսերում և անմարդկային հասարակության նկատմամբ վրդովմունքի մեջ: Թեև գլխավորը ողբերգական լարն է, այնուամենայնիվ դրա հետ հանդես է գալիս մարդու ազնվությունը և բարոյական մաքրությունը, ոչ թե նրա հոգու մանր քմահաճույքները, այլ ինչ-որ մեծ. ազնիվ բան, որը հակադրվում է այն ամենին, ինչ բնորոշում է շարժիների աշխարհը: Բանաստեղծը գտնում է, որ միայն մաքուր սերն է երջանկության աղբյուրը, շողշողուն լույս՝ խավարի թագավորության մեջ և նախանձում է նրանց, ովքեր կարող են սիրել անձնագոհ ու մաքուր սիրով, որն ամոքում է աշխատավոր մարդու վիշտը և թեթևացնում խեղճի տառապանքները:

Հովհաննիսյանը բանաստեղծական մեծ ուժով կարողացել է ցույց տալ գեղեցկի ու քաղքենիական իրականության միջև եղած հակասությունները և ռեալիստական հոգեբանական մի շարք դիմանկարներ կերտել: Նրանցից մի քանիսում ցույց են տրված փողի կործանարար ուժը հին հասարակության մեջ, կոպիտ ևսասիրությունը, մեծատունների աշխարհը, որին խորթ են մարդկային գեղեցիկ զգացումները:

1901 թ. բանաստեղծը գրեց «Ալագյազ լարձր սարին» խորապես ժողովրդական ոտանավորը, ուր հրաշալի բնականորեն նույնացվում է ժողովրդի հոգեկան հիանալի հատկությունների հետ, ուր սիրո կարոտը վառ կերպով արտահայտված է ժողովրդական կոլորիտի մեջ:

Ակադեմիկոս Ա. Տերտերյանն իր «Հովհաննես Հովհաննիսյան» աշխատության մեջ, խոսելով Հովհաննիսյանի ստեղծագործության ժողովրդական մոտիվների մասին, առանձնապես շեշտում է ժողովրդական երգերում ամենաարժեքավորը այն, որ նրանց սկզբնաղբյուրը հանդիսացել է ինքը՝ ժողովուրդը. այդ երգերն իրենց մեծամասնությամբ մտել են ժողովրդի մեջ, երբեմն նրա մեջ լուծելով հեղինակի անունը: Բանաստեղծն աշխարհի վրա նայում էր ժողովրդի աչքերով և հավատարիմ էր մնում գեղարվեստական ճշտությանը: Այդ երկերում նա մոտ է ժողովրդական պոեզիային ոչ միայն բովանդակու-

թյան ռեալիզմով, այլև իր ուսանավորների կոնպոզիցիայով և ոճական առանձնահատկություններով:

Հովհաննիսյանի սիրային քնարերգությունը շնչում է ժողովրդի հոգեկան հատկությունների ազնվությամբ: Բանաստեղծն այն միտքն է հաստատում, որ մարդու մեջ լավ շատ բան կա, իսկ արվեստի կոչումն է ծառայել մարդու երջանկությանը: Հովհաննիսյանը պահանջում է մարդկային վերաբերմունք դեպի կինը, պահանջում է, որ նրան համարեն բարեկամ և բնկեր: Բանաստեղծը դայրույթով նշավական է կնոջ նկատմամբ անմարդկային վերաբերմունքը: Հովհաննիսյանի ներքին բողոքի ամբողջ ուժն ուղղված է մարդկային հոգին վաճառողների դեմ:

Բնությունը նվիրված երկերում արտահայտվել են սոցիալական մոտիվներ, երկրի վրա գեղեցկի և բարու հաղթանակի ձգտում: Մի շարք ուսանավորներում բանաստեղծը խտացնում է աշխատավոր մարդու ողբերգական ապրումները, խոհերը:

Բայց այդ ուրախ բնույթսն տոնին
Մեկը շրկաւ՝ խնդակցեւ:
Մութ էր պատէլ մեր սրտերին,
Թռչուն էինք բունավեր:

Բնության մեջ խաղաղը, գեղեցիկը հակադրություն են կազմում մարդկային խորունկ դրամաների հետ: Հաճախ ասես բնությունը թախծում է բանաստեղծի հետ, բայց միաժամանակ հավատ է ներշնչում ապագայի նկատմամբ, որովհետև բանաստեղծը զգում է, որ բնությունը գտնվում է մշտական շարժման մեջ և ամեն ինչ փոխվում է: Բնությանը նվիրված երգերի մեջ հատկապես հռչակ է վայելում ռոմանտիկ հաղթանդամ մի ծերուկ հսկա...» պատկերով սկրսվող ուսանավորը, որի մեջ բանաստեղծը բնությունը արտացոլում է պոետական դրամանալի ճշմարտացիությամբ և պարզությամբ:

Ուպես հաղթանդամ մի ծերուկ հսկա,
Կախված է ժայռի չբերի վրա:
Սկիբ կայտառ զնում են գալիս
Եվ ժայռին սիրո համբույր են տալիս:

Իհարկե, այդ երգերի շարքում կան երկրորդական, անհաջող, ինչպես նաև կրոնական մոտիվներ բովանդակող որոշ ուսանավորներ, սակայն զլխավորը բնության բնորոշ գծերի և կենդանի գույների պատկերումն է: Հասարակական կյանքի և մարդկային հոգեբանության շատ կողմեր բանաստեղծը բացահայտում է բնության երևույթների լեզվով, օգտագործելով պոետական ընկալման յուրօրինակ ձևեր:

Հովհաննիսյանը հատուկ նշանակություն էր տալիս թարգմանական արվեստին, լավ հասկանալով, որ այն հարստացնում է ազգային մշակույթը: Բանաստեղծը ոչ միայն բեղմնավոր աշխատանք է կատարել այդ բնագավառում, այլև հանդես է եկել հողվածներով, որոնց մեջ շոշափել է թարգմանական արվեստի խնդիրները, հենվելով ուսու ու արևմտաեվրոպական թարգմանական գրականության հարուստ փորձի վրա: Բարձր գնահատելով և խրախուսելով թարգմանությունները, բանաստեղծը դրա հետ մեկտեղ խստորեն դատապարտում էր առանձին թարգմանիչների կողմից թույլ տրված աղավաղումները: Որպեսզի լրիվ պատկերացում ունենանք թարգմանության արվեստի վերաբերյալ

ներա հայացքների մասին, անհրաժեշտ է ծանոթանալ իր իսկ թարգմանած՝ «Թագավոր» պիեսի առաջարանին։ Այդ առաջարանում Հովհաննիսյանը լուսարանում է թարգմանական արվեստի տեղն ու նշանակությունը և հանգամանորեն կանգ առնում նրա հիմնական սկզբունքների վրա։ Ինչպես այդ առաջարանում, այնպես էլ Շեքսպիրի «Համլետին» և Պուշկինի «Կապիտանի աղջիկը» վիպակի թարգմանությունների մասին զրված գրախոսականներում մենք տեսնում ենք բանաստեղծի հոգատարությունը հայ թարգմանական արվեստը բարելավելու մասին։ Հովհաննիսյանի կարծիքով, ազատ, անկաշկանդ թարգմանության արվեստը տարրերով է այն դեպքից, երբ թարգմանիչն այնքան է հեռանում բնագրից, որ բնթերցողն զգում է այդ։ Հովհաննիսյանը պահանջում է ուշադրություն դարձնել այն բանին, որ թարգմանության ժամանակ հակառակը տեղի չունենա, այսինքն՝ շատացվի բառացի թարգմանություն։ Այն դեպքում, երբ թարգմանիչը չի վերարտադրում բնագրի կենդանի ու պատկերավոր բառապաշարը, երկը, ըստ էության, կտրցնում է բնթերցողին։ Այդ ամենը, սակայն, հիմք չի տալիս պնդելու, թե բանաստեղծն ազատ թարգմանության կողմնակից է՝ ի վնաս բնագրին հավատարիմ մնալու պահանջի։ Այս հարցը, որը մինչև հիմա մնում է վեճի առարկա, Հովհաննիսյանի մեկնաբանության մեջ առարկություն չի հարուցում։ Նրա հայացքներն այն միտքն են հաստատում, որ բնագրին հավատարիմ մնալու պահանջը անհրաժեշտ է զուգակցել երկի ոգուն հավատարիմ մնալու պահանջին, որը ամեն մի ղեղարվեստական թարգմանության հիմնական պայմանն է։

Հովհաննիսյանը շատ պահանջկոտ էր իր վերաբերմամբ, նա հանդես էր գալիս գիլետանություն դեմ և գտնում էր, որ իր ստեղծագործական գործունեության մեջ թարգմանիչը պետք է նպաստի տարբեր ժողովուրդների մշակույթների մերձեցմանը։ Թարձրորակ թարգմանության համար իր պայքարում Հովհաննիսյանը նույնպես հետապնդում էր ժողովրդին ծառայելու ազնիվ նպատակը։ Անհրաժեշտ է նկատել, որ բանաստեղծի խոսքերը վերաբերում են ղեղարվեստական երկի ձևի ու բովանդակության համահնչունության սկզբունքին։ Հենց այդ սկզբունքից ելնելով, բանաստեղծը գտնում էր, որ բարձրորակ ղեղարվեստական թարգմանությունը համարժեք է ինքնուրույն ստեղծագործությանը։ Թարգմանիչն ամենից առաջ պետք է ճիշտ վերարտադրի բովանդակությունը, պահպանելով իր կիզադափարական էությունը։ Հովհաննիսյանը խրախուսում է գլխավորը բնագրին հավատարիմ մնալ այն աստիճան, որ թարգմանությունը մրցակցի նրա հետ։ Այդ իմաստով լավագույն օրինակ է հանդիսանում գերմանացի բանաստեղծ Ուլանդի «Երգչի անեծքը» բանաստեղծության Հովհաննիսյանի թարգմանությունը։

Դաբեր առաջ կար բարձրալեւո պարիսպներով մի ղղակ—
Հոյակապ էր, փառքն հասել էր մինչև օվկիան կապուտակ.
Շուրջը փոված ծաղկապսակ անուշարույշ պարտեզներ,
Թաւմ, զովաշունչ շատրվաններ ցայտում էին վառ շիբե։:

Հովհաննիսյանի թարգմանական գործունեությունը սերտ կապ ստեղծեց նրա սեփական երկերի ու թարգմանությունների միջև։ Նրա թարգմանությունների հաջողությունը ակներև է՝ սկսած պատանեկական առաջին փորձերից և վերջացրած Պավլո Տիչինայի ոտանավորների թարգմանությամբ։ Եվ պատահական չէ, որ Հովհաննիսյանի թարգմանական գործունեությունը նույնպես

նոր փուլ է հայ պոետական արվեստի հետագա զարգացման մեջ: Բանաստեղծը թարգմանությունները չէր դասում որևէ առանձին բնագավառում, այլ զրանք կապակցում էր զրական գործունեության ընդհանուր խնդիրներին: Այդ կողմից շատ բազմազան է Հովհաննիսյանի զրական աշխատանքը: Նրա թարգմանությունների թվումն են՝ Հոմերոսի, Սոփոկլեսի, էսքիլեսի, Սաֆոյի, Անակրեոնի, Շիլլերի, Գյոթեի, Հյուգոյի, Հայնեի, Բոմարշեի, Միցկևիչի, Պուշկինի, Լեմոնտովի, Նեկրասովի, Լեսկովի, Նադսոնի, Տիչինայի և ուրիշ շատ հեղինակների երկերը:

Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո Հովհաննիսյանը, լինելով հայ մշակույթի ազդեցիկ ներկայացուցիչներից մեկը, մեծ ճանաչում ձեռնամուխ եղավ կուլտուրական հեղափոխության խնդիրների իրականացմանը: Նրա այդ գործունեության էական կողմերից մեկը հանդիսանում է հայոց լեզվի բառապաշարի և բառարանային կազմի բնագավառում կատարած աշխատանքը: Առանձնապես հարկավոր է նշել նրա աշխատանքը հայ իրավաբանական տերմինաբանություն ստեղծելու գործում:

Թարգմանության ասպարեզում իր ընդհատված աշխատանքը Հովհաննիսյանը շարունակեց սովետական իշխանության տարիներին, իր գործունեությունը սերտորեն կապելով ժողովուրդների միջև ինտերնացիոնալ բարեկամության ամրապնդման գործին: Մասնավորապես «Պավլո Տիչինա» հոգվածում պոետը գրում է ժողովուրդների միջև մշակութային մերձեցման անհրաժեշտության մասին:

Հովհաննես Հովհաննիսյանի պոեզիայում արտացոլվել է մի ամբողջ դարաշրջան: Նրա պոեզիայում հիմնականը ժողովրդի տառապանքն ու ձգտումներն են: Բանաստեղծն իր գործունեության հենց սկզբից կանգնեց Ժողովրդայնության ու ռեալիզմի դիրքերում: Նրա պոեզիայում հսկայական տեղ են զբաղում բուրժուա-ֆեոդալական հարաբերությունների քննադատությունը և ժողովրդի շահերի պաշտպանությունը, առաջավոր իդեալների արտացոլումը, որոնք դարձան նոր բանաստեղծական դպրոցի հիմնաքարը: Հովհաննիսյանին զնահատելով որպես հայ պոեզիայի մեծագույն ներկայացուցիչներից մեկը, Բազակյանը նրա լիրիկան համարում է բյուրեղային. «Հավերժ երախտապարտ եմ և հավերժ շնորհակալ բանաստեղծության այդ մեծ մոդալետին, իմ կախարդ ուղեցույցին: Եվ ես բոլոր անկեղծությամբ զլուխս խոնարհում եմ նրա սրբազան հիշատակի առաջ, նրա անմահ երգի առաջ»⁶:

Հովհաննիսյանի զրական ժառանգությունը, որ այնքան էլ մեծ չէ ծավալով, կարևոր փուլ է հանդիսանում հայ պոեզիայի զարգացման պատմության մեջ և արմատապես մտել է հայ ժողովրդի մշակույթի ոսկե դանձարանը:

НАРОДНЫЙ ПОЭТ

(К 100-летию со дня рождения Иоаннеса Иоаннисяна)

Г. Е. ОВСЕПЯН

(Р е з ю м е)

В поэзии Иоаннисяна отражена целая эпоха. Главное в его поэзии—страдания народа и его стремления. Иоаннисян с самого начала своей творческой деятельности стоял на позициях народности и реализ-

⁶ Ա Վ. Ի ո ա հ ա կ յ ա ն, Երկեր, հատ. 4, էջ 54:

ма. В его поэзии большое место занимают изображение тягчайшей эксплуатации крестьянства, защита интересов народа, воспевание высоких идеалов, ставших фундаментом его поэтической школы. Пафос, эмоциональность, гуманистический дух поэзии Иоанисиана—вот основные черты его творчества. Оно оказало значительное влияние на формирование выдающихся мастеров армянской поэзии—Ав. Исаакяна, Ов. Туманяна и В. Терьяна. Исаакян писал Иоаннисиану: «Я впервые выпил из нового поэтического источника, потому что ты сам являлся этим золотоносным источником, журчащим на рубеже старых и новых армянских песен».

Литературное творчество Иоанисиана не велико по объему, но, безусловно, является важным этапом в истории развития армянской поэзии. Мысли и чаяния родного народа, нашедшие свое яркое выражение в поэзии Иоаннисиана, ее демократическая целенаправленность, которая была обусловлена тесной связью поэта с народом, обеспечивают непреходящее значение творчества Иоанисиана для художественной культуры армянского народа.